Funded by the European Union

MPF Migration Partnership Facility

in the framework of MPF

ICMPD International Centre for Migration Policy Development

implemented by ICMPD

VISAWISE ՀԱՅԱՍՏԱՆ

ԴԻՄԻՐ ՃԻՇՏ ՃԱՄՓՈՐԴԻՐ ԱՑԱՏ

ՇԵՆԳԵՆՅԱՆ ՎԻԶԱՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Funded by
the European Union

Migration Partnership Facility
in the framework of MPF

ICMPD
International Centre for
Migration Policy Development
implemented by ICMPD

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության համաֆինանսավորմամբ:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

© - 2026 - Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոն:
Բոլոր իրավունքները պաշտպանված են:
Արտոնագիր՝ Եվրոպական միություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻՆՉ Է ՇԵՆԳԵՆԸ 3

ԻՆՉ Է ՇԵՆԳԵՆՅԱՆ ՎԻԶԱՆ 5

ՇԵՆԳԵՆՅԱՆ ՎԻԶԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ 9

ՈՐՏԵՂ ԴԻՄԵԼ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 9

ԻՆՉՊԵՍ ԴԻՄԵԼ 12

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՇԵՆԳԵՆՅԱՆ ՎԻԶԱՅԻ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ 14

ԻՆՉԻՆ Է ՊԵՏՔ ՀԱՏՈՒԿ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁՆԵԼ ՎԻԶԱՅԻ ԴԻՄՈՒՄԸ ՊԱՏՐԱՍՏԵԼԻՍ 16

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 24

ԻՆՉ Է ՊԵՏՔ ԱՆԵԼ ԵՎ ԻՆՉ ՊԵՏՔ ՉԷ ԱՆԵԼ 28

ԻՆՉ Է ՊԵՏՔ ԱՆԵԼ 28

ԻՆՉ ՊԵՏՔ ՉԷ ԱՆԵԼ 30

ԱՄՓՈՓԻՉ ԽՈՐՀՈՒՐԴ 32

ԻՆՉ Է ՇԵՆԳԵՆԸ

Շենգենի համաձայնագրով մարդկանց հնարավորություն է տրվել ճամփորդել այդ համաձայնագրի անդամ երկրների տարածքներում առանց սահմանային հսկողություն անցնելու: Դա նշանակում է, որ այն պահին, երբ անձն օրինական ճանապարհով որևէ երկրի տարածքով մուտք է գործում շենգենյան գոտի, նա կարող է անխոչընդոտ տեղաշարժվել այդ և բոլոր այլ անդամ երկրների տարածքներով:

Շենգենյան գոտու երկրներն են՝ Ավստրիան, Բելգիան, Բուլղարիան, Գերմանիան, Դանիան, Էստոնիան, Իսպանիան, Իսլանդիան, Իտալիան, Լատվիան, Լեհաստանը, Լիխտենշտեյնը, Լիտվան, Լյուքսեմբուրգը, Խորվաթիան, Հունաստանը, Հունգարիան, Մալթան, Նիդերլանդները, Նորվեգիան, Շվեդիան, Շվեյցարիան, Չեխիան, Պորտուգալիան, Ռումինիան, Սլովակիան, Սլովենիան, Ֆինլանդիան և Ֆրանսիան:

Երրորդ երկրների քաղաքացիներից **շենգենյան համակարգը** պահանջում է վիզայի առկայություն և ճամփորդության կանոնների պահպանում: Այդուհանդերձ, քաղաքացին կարիք չունի վիզայի համար առանձին դիմելու բոլոր այն երկրներին, որոնք պատրաստվում է այցելել իր ճամփորդության ընթացքում: Փոխարենը նա կարող է դիմել դրանցից մեկին՝ կարճատև այցելության (Type C) մեկ շենգենյան վիզա ստանալու համար, որն էլ կարող է օգտագործել շենգենյան գոտու այդ և մնացած բոլոր երկրներում զբոսաշրջության, բիզնեսի, ազգականներին այցելելու, բուժման, կարճատև կրթական ծրագրերի կամ միջոցառումների մասնակցելու նպատակներով:

Քանի որ Հայաստանը Եվրոպական միության անդամ չէ և դեռ չի հայտնվել դեպի ԵՄ առանց վիզայի մինչև 90 օր ժամկետով այցելելու հնարավորություն ունեցող երկրների ցանկում, ՀՀ անձնագիր կրողները պարտավոր են շենգենյան վիզա ստանալ մինչև մեկնումը, եթե, իհարկե, չունեն ճամփորդական այնպիսի փաստաթուղթ, որը թույլ է տալիս մուտք գործել առանց վիզայի (օրինակ՝ շենգենյան որևէ երկրում կացության կարգավիճակ):

ԵՍ

ՇԵՆԳԵՆՅԱՆ ԳՈՏԻ



ԻՆՉ Է ՇԵՆԳԵՆՅԱՆ ՎԻԶԱՆ

Շենգենյան վիզան երրորդ երկրների քաղաքացիների համար շենգենյան գոտի մուտք գործելու և այնտեղ 180 օրվա ընթացքում առավելագույնը 90 օր գտնվելու թույլտվություն է:

Շենգենյան գոտի մուտքը թույլատրող վիզաները երեք տեսակի են

Type A

«A» տեսակի (Type A)՝ օդանավակայանով տարանցման (տրանզիտի) վիզա (թույլ է տալիս օգտվել շենգենյան երկրի օդանավակայանի միջազգային տարանցման գոտուց, թռիչքների միջև ընկած ժամանակահատվածն անցկացնելու համար՝ առանց տվյալ տարածքից դուրս գալու հնարավորության): Ներկայումս անհրաժեշտ է միայն Լեհաստանի և Չեխիայի տարածքով տարանցման դեպքում:

Type C

«C» տեսակի (Type C)՝ կարճատև այցելության վիզա:

Type D

«D» տեսակի (Type D)՝ երկարատև այցելության ազգային վիզա (որը վիզաների մասին ԵՄ օրենսդրության իմաստով որպես այդպիսին շենգենյան վիզա չի համարվում):

Այս տեսակի վիզաները տրամադրվում են

- Մեկ մուտքի հնարավորությամբ (թույլ են տալիս շենգենյան գոտի մուտք գործել միայն մեկ անգամ)
- Երկու մուտքի հնարավորությամբ (թույլ են տալիս շենգենյան գոտի մուտք գործել երկու անգամ)
- Բազմակի մուտքի հնարավորությամբ (թույլ են տալիս բազմակի մուտքեր՝ մինչև վիզայի վավերականության ժամկետը լրանալը)

Վիզայի դիմումը կարող է չընդունվել, եթե բավարարված չեն մի շարք հիմնական պահանջներ, օրինակ՝ բացակայում է դիմում-հարցաթերթիկը, անձնագիրը, վերցված չեն մատնահետքերը, կատարված չէ վիզայի վճարը կամ հայտնաբերվել են այցելության ժամկետների/ուղղությունների հետ կապված անհամապատասխանություններ:
Վիզա չի տրամադրվում, եթե քաղաքացին ներկայացրել է կեղծ փաստաթղթեր կամ տեղեկություններ, չի հիմնավորել ճամփորդության

նպատակը, չի ներկայացրել բավարար ֆինանսական միջոցների առկայության ապացույցներ կամ ճամփորդական բժշկական ապահովագրության վկայագիր, նախկինում գերազանցել է վիզայի ժամկետը կամ ճանաչվել է ռիսկային՝ անվտանգության, հանրային առողջապահության կամ վիզայի ժամկետը խախտելու հավանականության տեսանկյունից:

Ինչպես արդեն նշվել է, կարճատև այցելության վիզան (Type C) երրորդ երկրների քաղաքացիներին թույլ է տալիս սահմանափակ ժամանակահատվածով ճամփորդել շենգենյան գոտու երկրներ՝ զբոսաշրջության, բիզնեսի, ազգականներին այցելելու, բուժման, աշխատանքային կամ մշակութային միջոցառումների, ինչպես նաև կարճաժամկետ ուսումնական ծրագրերի մասնակցելու նպատակով:

Ընդհանուր կանոնն այն է, որ այցելուն կարող է շենգենյան գոտու ողջ տարածքում (ոչ կոնկրետ երկրում) գտնվել առավելագույնը 90 օր՝ ցանկացած 180-օրյա ժամանակահատվածում:

Այցելության թույլատրված տևողությունը կարող է նաև ընդհատումներով լինել, քանի որ վերը նշված 180-օրյա ժամանակահատվածում շենգենյան երկրներում անցկացված բոլոր օրերը գումարվում են: Օրինակ՝ եթե քաղաքացին 30 օր անցկացրել է Գերմանիայում և 20 օր Ֆրանսիայում, ապա այցի ընդհանուր տևողությունը կազմում է 50 օր: Նույն տրամաբանությամբ՝ եթե անձը 30 օր անցկացրել է Ֆրանսիայում, ապա վերադարձել տուն, իսկ հետո նույն 180-օրյա ժամանակահատվածում 40 օրով ճամփորդել Գերմանիա, ապա այցի ընդհանուր տևողությունը կազմում է 70 օր:

Շենգենյան վիզայի համակարգն աշխատում է «մեկ վիզա՝ մի քանի երկրի համար» սկզբունքով: Այսինքն՝ առանձին երկրներին դիմելու փոխարեն անձը մեկ դիմում է ներկայացնում հիմնական ուղղությունը հանդիսացող երկրի հյուպատոսություն, որը և պատասխանատու է տվյալ երկրում վիզայի դիմումն ընդունելու համար:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Նախկին վիզաները բարեխղճորեն օգտագործած քաղաքացիները ստանում են առավելություն: Այդ համակարգը կոչվում է կասկադային: Հաճախակի ճամփորդողներին այն լրացուցիչ հնարավորություններ է տալիս:

«Վիզաների կասկադը» ԵՄ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգ է, որը հաճախակի և վստահելի ճամփորդներին թույլ է տալիս ժամանակի ընթացքում ստանալ բազմակի մուտքի վիզա՝ յուրաքանչյուր անգամ ավելի երկար ժամկետով՝ նոր կարճաժամկետ վիզայի համար դիմելու փոխարեն:

Այդուհանդերձ, շատերն առաջին անգամ դիմելիս սխալմամբ ակնկալում են, որ միանգամից կստանան բազմակի մուտքի երկարաժամկետ վիզա: Նման ակնկալիքը շատ հաճախ անիրատեսական է: Կասկադային մոտեցումն առաջին հերթին պահանջում է մաքուր պատմություն և ժամանակ, և ոչ միայն դիմումների կամ այցելությունների հաճախականություն:

Ավանդական «կասկադն» աշխատում է հետևյալ կերպ

1

ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ

Բազմակի մուտքի վիզա 1 տարի ժամկետով

Դիմողը կարող է վիզա ստանալ 1 տարով, եթե նախորդ 2 տարվա ընթացքում ստացել և բարեխղճորեն օգտագործել է 3 շենգենյան վիզաներ:

2

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ

Բազմակի մուտքի վիզա 2 տարի ժամկետով

Դիմողը կարող է վիզա ստանալ 2 տարով, եթե նախորդ 2 տարվա ընթացքում բարեխղճորեն օգտագործել է 1 տարով տրամադրված բազմակի մուտքի վիզան:

3

ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼ

Բազմակի մուտքի վիզա 5 տարի ժամկետով

Դիմողը կարող է վիզա ստանալ 5 տարով, եթե նախորդ 3 տարվա ընթացքում բարեխղճորեն օգտագործել է 2 տարով տրամադրված բազմակի մուտքի վիզան:

«Բարեխղճորեն օգտագործել» նշանակում է

- Պահպանել **90/180 օրվա** կանոնը, ինչի համար ամբողջությամբ պատասխանատու է հենց ինքը՝ դիմողը
- Ժամանակին դուրս գալ շենգենյան գոտուց
- Օգտագործել վիզան հայտարարված նպատակով (օրինակ՝ եթե դիմել էիք որպես զբոսաշրջիկ, ապա չէիք կարող այդ ընթացքում աշխատել, կամ եթե դիմել էիք որպես ուսանող, ապա պետք է ուսումնական ծրագրի մասնակցած լինեիք)
- Չգերազանցել վիզայի ժամկետը և ընդհանրապես թույլ չտալ միգրացիոն կանոնների խախտումներ

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

Կասկադային սխեման չի կիրառվում ինքնաբերաբար: Նույնիսկ եթե դիմողը բավարարում է սահմանված բոլոր պահանջները, հյուպատոսությունը միևնույն է կստուգի մուտքի պայմանների համապատասխանությունը, հատկապես՝ ֆինանսական միջոցների առկայությունը, ճամփորդության նպատակը և վերադառնալու մտադրությունը:

Բացի այդ, վիզայի վավերականության ժամկետը երբեք չի կարող գերազանցել անձնագրի վավերականության ժամկետը: Եթե անձնագրի ժամկետն ավելի շուտ է լրանում, ապա վիզան կտրամադրվի համապատասխան ժամկետով:

Եթե քաղաքացին ունի վավեր վիզա, սակայն անձնագրում այլևս չկան դատարկ էջեր կնիք դնելու համար, նա կարող է խնդրել տեղափոխել վիզան նոր անձնագիր: Հին վիզան կչեղարկվի, և հնարավորինս սեղմ ժամկետում անվճար կտրամադրվի նորը՝ վավերականության մնացած ողջ ժամկետով:

ՀԻՇԵ՛Ք

Վիզայի պատշաճ օգտագործումը վստահություն է կառուցում, իսկ չարաշահումը քանդում է այն:

ՇԵՆԳԵՆՅԱՆ ՎԻԶԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՈՐՏԵՂ ԴԻՄԵԼ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ներկայումս Հայաստանում շենգենյան վիզա ուղղակիորեն տրամադրում է տասը երկիր՝ Բուլղարիան, Գերմանիան, Իտալիան, Լեհաստանը, Լիտվան, Հունաստանը, Չեխիան, Ռումինիան, Սլովակիան և Ֆրանսիան:

Այս երկրների հյուպատոսություններով Հայաստանում

Ֆրանսիան ներկայացնում է Իսլանդիան, Նորվեգիան և Պորտուգալիան

Գերմանիան ներկայացնում է Բելգիան, Լյուքսեմբուրգը և Շվեդիան

Իտալիան ներկայացնում է Ֆինլանդիան և Մալթան

Լիտվան ներկայացնում է Դանիան, Էստոնիան, Հունգարիան, Լատվիան և Նիդերլանդները

Լեհաստանը ներկայացնում է Սլովենիան և Շվեյցարիան

Կան նաև երկրներ, որոնք Հայաստանի տարածքում վիզաներ չեն տրամադրում:

Օրինակ՝ **Ավստրիան** շենգենյան վիզաները տրամադրում է Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում գործող իր դեսպանությունից, իսկ դիմումների ընդունման գործընթացն արտապատվիրակված է «VFS Global» կազմակերպությանը՝ Երևանում:

Իսպանիան շենգենյան վիզաները տրամադրում է Մոսկվայում գործող իր դեսպանությունից, սակայն դիմումների ընդունման գործընթացն արտապատվիրակված է «BLS International» կազմակերպությանը՝ Երևանում: Փոխադարձ ներկայացվածության համակարգը կարող է փոփոխվել, ուստի քաղաքացիները պետք է նախօրոք հավաստիանան, որ դիմում են

համապատասխան հյուպատոսություն՝ այցելելով այդ հյուպատոսության պաշտոնական կայք:
Դա նշանակում է, որ Հայաստանի քաղաքացիներն արդեն իսկ մինչև այցելության («վիզայի հարցազրույցի») օրն ամրագրելը պետք է հստակ իմանան, թե որ հյուպատոսություն են իրենք դիմելու: Ճամփորդության հիմնական ուղղությունը չհանդիսացող երկրի հյուպատոսություն դիմելը տարածված սխալ է և կարող է հանգեցնել ուշացումների կամ մերժման:

Մի շարք երկրներ Հայաստանում դիմումների ընդունման գործընթացն արտապատվիրակում են հետևյալ արտաքին ծառայություն մատուցող կազմակերպություններին (վիզաների կենտրոններին)

«VFS Global»՝ Ավստրիա (սպասարկում է վիզաների տրամադրման գործընթացը Թբիլիսիից) և Լիտվա

«GVCW Visa Application Center»՝ Հունաստան

«TLScontact»՝ Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա և Չեխիա

«BLS International»՝ Սլովակիա և Իսպանիա (վերջինս վիզաների տրամադրման գործընթացը սպասարկում է Մոսկվայից)

Վիզաների կենտրոնները կատարում են

- Այցելության օրվա նշանակում
- Վիզայի դիմումների և վճարումների ընդունում
- Կենսաչափական տվյալների հավաքագրում (մատնահետքեր, լուսանկար)
- Անձնագրերի վերադարձ

Վիզաների կենտրոնները վիզա չեն տրամարդում: Վերջնական որոշումը միշտ կայացնում է համապատասխան հյուպատոսությունը:

Կա տարածված թյուրընկալում, որ միջնորդ կազմակերպություններն, օրինակ տուրիստական գործակալությունները, կարող են ազդել վերջնական որոշման վրա, քանի որ «աշխատում են» վիզաների կենտրոնների հետ: Դա այդպես չէ. վիզաների կենտրոնները չեն կարող օգնել վիզա ստանալու հարցում:

2014թ. ԵՄ և Հայաստանի միջև կնքված՝ վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրի շնորհիվ ՀՀ քաղաքացիների համար շենգենյան վիզայի վճարը կազմում է 35 եվրո՝ 90 եվրոյի փոխարեն, որը գործում է բազմաթիվ այլ երկրների համար: Նույն համաձայնագրով դիմողների որոշակի խմբեր ընդհանրապես ազատվում են այդ վճարից: Այդ խմբերի ցանկն ընդգրկված է վերոհիշյալ համաձայնագրի 6-րդ հոդվածի 2-րդ մասում և հասանելի է հետևյալ հղումներով՝

https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX%3A22013A1031%2801%29 (անգլերեն)

https://www.mfa.am/filemanager/Statics/EU_AM_VFA_am.pdf (հայերեն)

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Վիզաների կենտրոնների ծառայություններն անվճար չեն՝ նույնիսկ եթե դիմողն ազատված է վիզայի վճարից: Դիմումների ընդունման և սպասարկման գործընթացը ենթադրում է լրացուցիչ ծախսեր, հատկապես երբ փաստաթղթերի փաթեթն ու անձնագիրը ուղարկվում են այլ երկրում գտնվող հյուպատոսություն և ապա վերադարձվում միջազգային փոստային առաքման միջոցով (օրինակ՝ Ավստրիայի և Իսպանիայի դեպքում):

ԻՆՉՊԵՍ ԴԻՄԵԼ

Դիմումը պետք է ներկայացվի ճամփորդության հիմնական ուղղությունը հանդիսացող երկրի հյուպատոսություն, իսկ եթե այդ երկրները մի քանիսն են, ապա այն երկրի, որտեղ պատրաստվում եք առավել երկար ժամանակ գտնվել: Եթե ճամփորդության օրերը հավասարապես բաշխված են երկրների միջև, ապա անհրաժեշտ է դիմել այն երկրի հյուպատոսություն, որով մուտք եք գործելու շենգենյան գոտի: **Ցանկացած այլ հյուպատոսություն միտումնավոր դիմելը, ինչը հաճախ կոչվում է «վիզա շոփինգ», կարող է հանգեցնել մերժման:**

Վիզա ստանալու գործընթացը սկսվում է դեսպանությունում (հյուպատոսությունում) կամ համապատասխան վիզաների կենտրոնում այցելության օրն ամրագրելուց: Քաղաքացին ներկայացնում է լրացված դիմում-հարցաթերթիկը, անձնագիրը, լուսանկարները, ճամփորդական բժշկական ապահովագրության վկայագիրը, շենգենյան գոտում բնակվելու վայրի վերաբերյալ ապացույցը, ավիատոմսերի ամրագրումը, ֆինանսական միջոցների առկայությունն, ինչպես նաև զբաղվածությունը և ընտանեկան կարգավիճակը հաստատող փաստաթղթերը, որոնք հիմնավորում են նրա կապը հայրենիքի հետ: Այցելությունը սովորաբար նշանակվում է ամրագրման պահից երկու շաբաթվա ընթացքում:

Ներկայացված փաստաթղթերն ապա ուսումնասիրվում են հյուպատոսության կողմից ըստ չորս հիմնական չափանիշների՝ ճամփորդության իրական նպատակ, ֆինանսական միջոցների առկայություն, մինչև վիզայի վավերականության ժամկետի ավարտը շենգենյան գոտին լքելու մտադրություն և ներկայացված փաստաթղթերի արժանահավատություն ու ճշգրտություն:



Հյուպատոսության աշխատակիցը վիզայի տրամադրման կամ մերժման որոշումն ընդունում է ոչ միայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա: Նա գնահատում է դիմումի ընդհանուր արժանահավատությունը:

Օրինակ՝ հյուրանոցի ամրագրումը, ավիաթռիչքների ուղղությունները, գործատուի տրամադրած՝ զբաղվածության և աշխատավարձի չափի մասին տեղեկանքները, բանկային հաշիվների քաղվածքները, ինչպես նաև դրանց բոլորի տրամաբանական կապակցվածությունն ու ճշգրտությունը: Բանկային հաշվին հանկարծակիորեն հայտնված խոշոր գումարները, կասկածելի հյուրանոցային ամրագրումները, զբաղվածության ոչ բավարար ապացույցները կամ ճամփորդության ոչ հստակ ծրագիրը հաճախ կասկածներ են առաջացնում և հանգեցնում մերժման: Եթե մոտալուտ ճամփորդությունից զատ դիմողը պլանավորում է այլ այցելություններ մոտ ապագայում և դիմում է բազմակի մուտքի վիզա ստանալու համար, նա պետք է նաև ներկայացնի այդ այցելություններին վերաբերող համապատասխան փաստաթղթերը:

Շենգենյան վիզայի առկայությունը մուտքի նախապայմանն է, այլ ոչ թե երաշխիքը: Ներկայացված յուրաքանչյուր դիմումի արժանահավատությունն ու ամբողջականությունը անհատապես գնահատվում են հյուպատոսության կողմից: Նույնիսկ վիզայի առկայության դեպքում մուտքի երկրի սահմանապահ ծառայությունը կարող է պահանջել ներկայացնել վերադարձի տոմսերը, հյուրանոցի ամրագրումը, ֆինանսական միջոցների առկայության ապացույցները, ինպես նաև հետաքրքրվել ճամփորդության իրական նպատակի մասին, և եթե ճամփորդողի տրամադրած փաստաթղթերն ու տեղեկությունները բավականաչափ արժանահավատ ու համոզիչ չգտնվեն, նրան կարող են մերժել մուտքը և չեղարկել վիզան: Հետևաբար, խորհուրդ ենք տալիս ձեռքի տակ ունենալ բոլոր այն փաստաթղթերի պատճենները, որոնք ներկայացվել էին վիզա ստանալու համար (օրինակ՝ հրավերը, ամրագրումները և այցելության նպատակը նշող այլ փաստաթղթերը):



ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՇԵՆԳԵՆՅԱՆ ՎԻԶԱՅԻ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Վիզայի մերժման ամենատարածված պատճառը **հայրենիքի հետ ամուր կապերի ոչ բավարար հիմքեր ներկայացնելն է:** Հյուպատոսություններն առանձնակի ուշադրություն են դարձնում զբաղվածության և եկամտի կայունությանը, սեփականության/գույքի և ընտանեկան կապերի առկայությանը:

Երկրորդ պատճառը **ճամփորդության նպատակի մասին ոչ հստակ կամ անարժանահավատ տեղեկություններ տրամադրելն է:** Անտրամաբանական երթուղիներ նշող, կասկածահարույց ամրագրումներ կամ հրավերներ պարունակող դիմումները շատ հաճախ հանգեցնում են մերժման՝ կասկածներ առաջացնելով առ այն, թե արդյոք ճամփորդությունը տեղի կունենա այն պայմաններով, որոնցով հայտարարվել է:

Ֆինանսական միջոցների ոչ բավարար լինելը ևս մեկ որոշիչ գործոն է: Դիմողները պետք է ապացուցեն, որ կարող են ամբողջությամբ հոգալ ճամփորդության հետ կապված բոլոր ծախսերը: Փոքր մնացորդով, անկանոն եկամտով կամ մինչև դիմումի ներկայացման օրը հանկարծակի ի հայտ եկած խոշոր մուտքեր արտացոլող բանկային քաղվածքները հյուպատոսությունների կողմից շատ հաճախ վստահության չեն արժանանում:

Նույնչափ կարևոր է ներկայացվող **փաստաթղթերի արժանահավատությունն ու իսկությունը:** Զբաղվածության և աշխատավարձի մասին կեղծ տեղեկանքներ, անբարեխիղճ ճանապարհով ստացված բանկային քաղվածքներ, ձեռնարկատիրական գործունեության մասին չհիմնավորված տեղեկություններ ներկայացնելու տարածված երևույթը հյուպատոսություններին ստիպում է հսկողության ավելի խիստ միջոցներ կիրառել: Անգամ մեկ կասկածելի դրվագը կարող է ստվեր նետել ամբողջ դիմումի վրա:

Մերժմանը հանգեցնող հավանական գործոններից մեկը նաև **ճամփորդությունների սահմանափակ կամ բացակայող պատմությունն է:** Միջազգային ճամփորդությունների պատմություն չունեցող դիմողները համարվում են ավելի ռիսկային, հատկապես եթե դիմում են երկարաժամկետ

այցելությամբ կամ բազմակի մուտքի վիզայի համար: Որպես այդպիսին, ճամփորդությունների պատմության բացակայությունը մերժման պատճառ լինել չի կարող, սակայն դա կարող է հաշվի առնվել հարակից հարցերի ուսումնասիրման ընթացքում:

Վիզայի մերժման հաճախակի պատճառներից մեկը այսպես կոչված **«վիզա շոփինգն է» (անգլ. «visa shopping»):** Դա այն երևույթն է, երբ քաղաքացին վիզայի դիմումը միտումնավոր ներկայացնում է այն երկրի հյուպատոսություն, որը նրա ճամփորդության հիմնական ուղղությունը չէ, կամ եթե այդ երկիր նրա այցելության վերաբերյալ չկան վստահելի հիմքեր, սակայն քաղաքացին համարում է, որ տվյալ հյուպատոսություն դիմելու դեպքում վիզա ստանալու հավանականությունը մեծ է: Եթե հայտարարված ուղղությունն ու ընտրված հյուպատոսությունը տարբեր են, կամ ի հայտ են գալիս փաստեր, որ դիմողն ի սկզբանե պատրաստվում է ճամփորդել մեկ այլ ուղղությամբ, ապա դա հաճախ հանգեցնում է մերժման, քանի որ դիմումն այլևս համարվում է ոչ արժանահավատ:

Բացի այդ ամենը, շենգենյան գոտու տարածքում կամ այլուր դիմողի կողմից նախկինում կատարված՝ **միգրացիոն կանոնների և արտոնված ժամկետի խախտումները** վճռորոշ բացասական նախադեպ են ստեղծում: Նման դեպքերում նույնիսկ ոչ էական անհամապատասխանությունը կարող է բացասաբար ազդել դիմումի գնահատման վրա:

Որպես ամփոփում կարող ենք փաստել, որ մերժումների մեծ մասի հիմքում ընկած է արժանահավատության պակասը. դիմողը ներկայացրած չի լինում Հայաստանում իր կայուն սոցիալ-տնտեսական կարգավիճակը փաստող բավարար հիմքեր, կամ էլ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության ընթացքում ճամփորդության հայտարարված նպատակի ու ծրագրի կառուցվածքի հավաստի ապացույցներ չեն հայտնաբերվում: Հստակությունն, ազնվությունն ու իրավական կարգապահությունը, հատկապես՝ «վիզա շոփինգի» արատավոր պրակտիկայից զերծ մնալը, առանցքային նշանակություն ունեն ցանկալի արդյունքին հասնելու տեսանկյունից:



ԻՆՉԻՆ Է ՊԵՏՔ ՀԱՏՈՒԿ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁՆԵԼ ՎԻԶԱՅԻ ԴԻՄՈՒՄԸ ՊԱՏՐԱՍՏԵԼԻՍ

Շենգենյան վիզայի դիմում-հարցաթերթիկը լրացնելիս և հիմնավորող փաստաթղթերը պատրաստելիս անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ներկայացվող տեղեկությունների ամբողջականությանը, ճշգրտությանն ու արժանահավատությանը: Մերժումը շատ հաճախ ստացվում է ոչ թե որևէ փաստաթղթի, այլև ներկայացված տեղեկությունների միջև տրամաբանական կապի բացակայության պատճառով:

Դա նշանակում է, որ դիմողը պետք է հստակ ու հիմնավոր կերպով ներկայացնի

- Ճամփորդության իրական նպատակը
- Ճամփորդության հետ կապված ծախսերը հոգալու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության ապացույցները
- Ճամփորդական բժշկական ապահովագրության վկայագիրը
- Շենգենյան գոտում բնակվելու վայրի վերաբերյալ ապացույցը
- Այցելությունից հետո Հայաստան վերադառնալու հստակ մտադրությունը հիմնավորող փաստեր, ինչպես օրինակ՝ կայուն աշխատանք, ընտանեկան կապեր, սեփական բիզնես, ընթացիկ կրթություն կամ անշարժ գույքի առկայություն

Հիշեցնենք, որ հյուպատոսությունները մշտապես ուշադրության կենտրոնում են պահում ներկայացված փաստաթղթերի ու տեղեկությունների արժանահավատությունը: Մինչև դիմումը ներկայացնելու օրը դիմողի հաշվին հանկարծակիորեն հայտնված խոշոր գումարները, եկամտի ոչ արժանահավատ աղբյուրները, հյուրանոցի կեղծ ամրագրումները կամ թերի փաստաթղթերը հաճախ հանգեցնում են մերժման:

Գործնականում դա նշանակում է, որ փաստաթղթերի որակն ավելի կարևոր է, քան քանակը: Հստակ, արժանահավատ ու լիարժեք տեղեկություններ պարունակող դիմում ներկայացնելը շատ ավելի կարևոր է, քան բազմաթիվ ավելորդ փաստաթղթերով այն ծանրաբեռնելը:

Շատ հաճախ մերժման պատճառ է դառնում այն, որ քաղաքացիները դիմում են կասկածելի միջնորդների, որոնք սխալ և կեղծ փաստաթղթեր են կազմում նրանց համար:

Նախևառաջ, դիմումը պետք է ներկայացվի համապատասխան հյուպատոսություն: Դա կախված է նաև հիմնական ուղղության կանոնից. դիմել այն երկրի հյուպատոսություն, որտեղ պատրաստվում եք առավել երկար գտնվել: Եթե օրերի քանակը հավասարապես բաշխվում է մի քանի երկրի միջև, անհրաժեշտ է դիմել այն երկրի հյուպատոսություն, որով մուտք եք գործելու շենգենյան գոտու տարածք: Հյուպատոսության ընտրությունը զուտ «վիզան հեշտ ստանալու» ակնկալիքի սկզբունքով համարվում է «վիզա շոփինգ» և մերժման տարածված պատճառներից է:

ՎԱՐԴԱՆԸ ՅԱՆԿԱՆՈՒՄ Է ՄԵԿՆԵԼ ՖՐԱՆՍԻԱ՝ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՆ ԱՅՑԵԼԵԼՈՒ (20 ՕՐՈՎ), ՍԱԿԱՅՆ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ՆԱԵՎ ԱՅՑԵԼԵԼ ԲԵԼԳԻԱ (2 ՕՐՈՎ):
ՆԱ ԺԱՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԵԼՈՒ Է ԱՄՍՏԵՐԴԱՄԻՑ (ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐ):
ՆՐԱ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆ Է, ՀԵՏԵՎԱԲԱՐ ՆԱ ՊԵՏՔ Է ԴԻՄՈՒՄԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԻ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ:

ԱՐՄԵՆԸ ՅԱՆԿԱՆՈՒՄ Է ՄԵԿՆԵԼ ԲԵԼԳԻԱ՝ ԳՈՐԾՈՎ (6 ՕՐՈՎ), ՍԱԿԱՅՆ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ՆԱԵՎ ԱՅՑԵԼԵԼ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՆ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ (6 ՕՐՈՎ):
ՆԱ ՇԵՆԳԵՆՅԱՆ ԳՈՏԻ ՄՈՒՏՔ Է ԳՈՐԾՈՒՄ ԲՐՅՈՒՍԵԼՈՎ (ԲԵԼԳԻԱ):
ԻՆՉՊԵՍ ԵՐԵՎՈՒՄ Է, ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ԵՎ ԲԵԼԳԻԱՅՈՒՄ ՆՐԱ ԳՏՆՎԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՆԵՐԸ ՆՈՒՅՆՆ ԵՆ, ՀԵՏԵՎԱԲԱՐ ՆԱ ՊԵՏՔ Է ԴԻՄԻ ԲԵԼԳԻԱՅԻ ԱՆՈՒՆԻՑ ՇԵՆԳԵՆՅԱՆ ՎԻԶԱ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԵՐԿՐԻ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ (ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԴԱ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆՆ Է), ՔԱՆԻ ՈՐ ՇԵՆԳԵՆՅԱՆ ԳՈՏՈՒ ՏԱՐԱԾՔ Է ՄՈՒՏՔ ԳՈՐԾՈՒՄ ԲԵԼԳԻԱՅՈՎ:

Դիմում-հարցաթերթիկում նշված անձնական տվյալները պետք է ամբողջությամբ համընկնեն անձնագրի տվյալների հետ. անունը, ազգանունը, անձնագրի սերիան և համարը, ծննդյան ամսաթիվը, անձնագրի վավերականության ժամկետը: Նույնիսկ չնչին անճշտությունը կարող է կասկածներ հարուցել և դառնալ ձգձգումների պատճառ:

Հարկ է նաև նշել, որ շենգենյան վիզայի ժամկետը չի կարող գերազանցել անձնագրի վավերականության ժամկետը: Անձնագիրը պետք է վավեր լինի առնվազն երեք ամիս այն օրվանից հետո, երբ նախատեսում եք լքել շենգենյան գոտու տարածքը:

Ճամփորդության ժամկետները պետք է լինեն իրատեսական և նույնությամբ նշված լինեն ներկայացվող բոլոր փաստաթղթերում. դիմում-հարցաթերթիկում, ավիատոմսի և հյուրանոցի ամրագրումներում, հրավերի նամակում, ճամփորդական բժշկական ապահովագրության վկայագրում և գործատուի կողմից տրամադրված տեղեկանքներում: Ճամփորդության ամսաթվերի անհամապատասխանությունը հաճախակի հանդիպող անճշտություններից է:

ԱՆՆԱՆ ԴԻՄՈՒՄ է ՎԻԶԱՅԻ ԵՎ ՆՇՈՒՄ, ՈՐ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ է ՄԱՍՆԱԿՑԵԼ ՀՈՒԼԻՍԻ 10–15-Ը ԿԱՅԱՆԱԼԻՔ ԲԻԶՆԵՍ-ՀԱՄԱԺՈՂՈՎԻ: ՍԱԿԱՅՆ ԵՐԲ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՍՏՈՒԳՈՒՄ է ԱՅԴ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՊԱՐԶՎՈՒՄ է, ՈՐ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԿԱՅԱՆԱԼՈՒ է ՀՈՒՆԻՍԻ 20–22-Ը: ԱՅԴ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԿԱԾՆԵՐ ԱՌԱՋԱՑՐԵՑ ՏՎՅԱԼ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԻ ԱՌՈՒՄՈՎ:

Ճամփորդության հայտարարված նպատակը պետք է լինի հստակ և հիմնավորված: Եթե նպատակը զբոսաշրջությունն է, ապա ճամփորդության ժամկետներն ու հյուրանոց(ներ)ի ամրագրումները պետք է տրամաբանորեն համապատասխանեն միմյանց: Եթե ճամփորդությունը գործնական է, հրավերի նամակում այդ մասին պետք է լինեն հստակ ու հավաստի տեղեկություններ: **Անհրաժեշտ է նշել հրավիրող կողմի (անձի կամ կազմակերպության) ամբողջական անունը/անվանումն ու հասցեն:**

Հյուրանոցի հասցեներն ընդունելի են միայն այն դեպքում, երբ նպատակը զբոսաշրջությունն է: Հրավերի վերաբերյալ համապատասխան մանրամասներ չպարունակող ընդհանրական նամակները հաճախ են մերժման պատճառ դառնում:



ԴԱՎԻԹԸ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ՀԱՐԴԵՐԻ ՎԱՃԱՌՔՈՎ Է ԶԲԱՂՎՈՒՄ, ՍԱԿԱՅՆ ՎԻՀԱՅԻ ԴԻՄՈՒՄ-ՀԱՐՅԱԹԵՐԹԻԿՈՒՄ ՆՇԵԼ Է, ՈՐ ՀՐԱՎԻՐՎԵԼ Է ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ: ՔԱՆԻ ՈՐ ՆՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ՏՎՅԱԼ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՀԵՏ ՈՐԵՎԷ ԿԱՊ ՉՈՒՆԻ, ԿԱՍԿԱԾՆԵՐ ԵՆ ԱՌԱՋԱՆՈՒՄ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ:

Ներկայացված ֆինանսական տեղեկությունները պետք է լինեն հավաստի և վկայեն կայուն եկամուտ ունենալու մասին: Հյուպատոսություններն իսկույն ուշադրություն են դարձնում դիմումը ներկայացնելուց կարճ ժամանակ առաջ դիմողի բանկային հաշվին կատարված կասկածելի խոշոր մուտքերին: Եթե դիմողի դիտարկելի բանկային պատմության մեջ նման նախադեպեր չեն նկատվում, դա կարող է հիմնավոր կասկածներ առաջացնել: Աշխատավարձը՝ որպես կայուն եկամուտ, շատ ավելի հիմնավոր ապացույց է, քան անկանոն մուտքագրումները:

ԻՐԻՆԱՆ ՎԻԶԱՅԻ ԴԻՄՈՒՄ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՔԱՂՎԱԾՔՈՒՄ ՅՈՒՅՑ ՏՎԵԼ ԽՈՇՈՐ ԳՈՒՄԱՐ: ՍԱԿԱՅՆ, ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՍՏՈՒԳՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է, ՈՐ ԱՅԴ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ՓՈՓՈԽՎԵԼ Է, ԻՍԿ ՀԱՇՎԻ ԻՐԱԿԱՆ ՄՆԱՑՈՐԴԸ ՇԱՏ ԱՎԵԼԻ ՓՈՔՐ Է: ԴԱ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է, ՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԿԵՂԾՎԱԾ ԵՆ:

Գործատուի տրամադրած տեղեկանքները նույնպես պետք է արժանահավատ և ստուգելի լինեն, հստակ նշեն անձի պաշտոնը, աշխատավարձի չափը, աշխատավայրից բացակայելու հիմքերը և աշխատանքային պայմանագրի ժամկետը: Անիրատեսական տվյալներ պարունակող տեղեկանքները և բանկային փաստաթղթերը նույնպես մերժման առավել տարածված պատճառներից են:



ԱՐՄԵՆԸ ՎԻԶԱՅԻ ԴԻՄՈՒՄ է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ ԵՎ ՆՇԵԼ, ՈՐ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ՄԱՍՆԱԿՑԵԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍԻ: ՆԱ ՈՒՆԻ ՀՐԱՎԵՐ, ՍԱԿԱՅՆ ՉՈՒՆԻ ՈՐԵՎԷ ԱՊԱՅՈՒՅՑ, ՈՐ ԱՇԽԱՏՈՒՄ Է ՏՎՅԱԼ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՄ ՈՒՆԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ: ԱՅՍ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԿԱՄԿԱԾՆԵՐ Է ԱՌԱՋԱՑՆՈՒՄ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԻ ՎԵՐԱԲԵՐԱԼ:

Կեղծ կամ դիմումը ներկայացնելուց հետո չեղարկված հյուրանոցի ամրագրումները, ինչպես նաև միևնույն կասկածելի ամրագրման օգտագործումը տարբեր դիմողների կողմից հաճախ հանդիպող երևույթներ են:
Դիմողները պետք է նաև զգույշ և ուշադիր լինեն միջնորդ կազմակերպությունների ծառայություններից օգտվելիս:
Բազմաթիվ մերժումներ կեղծ ամրագրումների և/կամ միջնորդների կողմից սխալ կազմված փաստաթղթերի հետևանք են:
Սակայն պատասխանատվությունը միշտ դիմողինն է՝ ոչ միջնորդինը:

ՄԱՐԻԱՆ ԴԻՄԵԼ է ՄԻՋՆՈՐԴ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝ ՎԻԶԱՅԻ ԴԻՄՈՒՄԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ: ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑԸ ՏՐԱՄԱԴՐԵԼ է ՀՅՈՒՐԱՆՈՑԻ ԵՎ ԱՎԻԱՏՈՄՄԻ ԿԵՂԾ ԱՄՐԱԳՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՎԱԾ ԲԱՆԿԱՅԻՆ ՔԱՂՎԱԾՔՆԵՐ: ԴԻՄՈՒՄՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼԻՍ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՀԱՅՏԵԼ է ԿԵՂԾԻՔՆԵՐԸ ԵՎ ՄԵՐԺԵԼ ՎԻԶԱՆ: ՆՈՒՅՆԻՍԿ ԵԹԵ ԴԻՄՈՒՄԸ ԿԱՋՄԵԼ է ՄԻՋՆՈՐԴԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ ՄԻԵՎՆՈՒՅՆ է ՄԱՐԻԱՆ է:

Եթե դիմողը նախկինում ունեցել է մերժումներ, նույն փաստաթղթերով դիմելը կրկին կհանգեցնի մերժման: Անհրաժեշտ է հասկանալ մերժման պատճառները և չկրկնել նույն սխալները հաջորդ անգամ դիմելիս:

Կրկին հիշեցնում ենք

- Դիմումն անհրաժեշտ է ներկայացնել այն երկրի հյուպատոսություն, որտեղ պատրաստվում եք առավել երկար գտնվել (հիմնական ուղղությունը հանդիսացող երկիր)
- Եթե տարբեր երկրներում անցկացվելիք ժամանակահատվածները նույնն են, դիմումը ներկայացվում է առաջին մուտքի երկրի հյուպատոսություն

Հիմնական ուղղությունից անկախ՝ «վիզան հեշտ տրամադրող» հյուպատոսություն դիմելը տարածված սխալ է՝ հայտնի որպես «վիզա շոփինգ», որը շատ հաճախ հանգեցնում է մերժման:

ԱՐԱՄԸ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ԻՐ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԵԾ ՄԱՍՆ ԱՆՑԿԱՑՆԵԼ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ, ՍԱԿԱՅՆ ԴԻՄՈՒՄ Է ԱՅԼ ԵՐԿՐԻ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ, ՔԱՆԻ ՈՐ ԼՍԵԼ Է, ՈՐ ԱՅԴ ՏԱՐԲԵՐԱԿՆ ԱՎԵԼԻ «ՀԵՇՏ Է»: ԵՐԲ ՏՎՅԱԼ ԵՐԿՐԻ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԻ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԵՎ ԿԲԱՑԱՀԱՅՏԻ, ՈՐ ԱՐԱՄԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱԿԱՆՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱՆ Է, ԴԻՄՈՒՄԸ ԿԱՐՈՂ Է ՉԸՆԴՈՒՆՎԵԼ, ՔԱՆԻ ՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է ՍԽԱԼ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ:

Կրկին շեշտենք, որ դիմումը կազմող բոլոր փաստաթղթերում պետք է նշված լինեն միևնույն տվյալները, որոնցում հստակ արտացոլված կլինեն ճամփորդության ուղղությունը, նպատակը, դիմողի ֆինանսական կարգավիճակը և Հայաստան վերադառնալու հստակ հիմքերը: Եթե Ձեր փաստաթղթերում այս հարցերի պատասխանները չգտնվեն, ապա Ձեր դիմումը մեծ հավանականությամբ կմերժվի:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանում շենգենյան վիզայի դիմում ներկայացնելու համար անհրաժեշտ են հետևյալ հիմնավորող փաստաթղթերն ու տեղեկությունները:

Դիմում-հարցաթերթիկ և դիմողի ինքնությունը հավաստող փվյալներ

- Լրացված և ստորագրված դիմում-հարցաթերթիկ
- Վավեր անձնագիր (անձնագիրը պետք է վավեր լինի առնվազն 3 ամիս այն օրվանից հետո, երբ նախատեսում եք լքել շենգենյան գոտու տարածքը, և ունենա առնվազն 2 դատարկ էջ), այդ թվում՝ անձնական տվյալների և լուսանկարի էջի, վիզաներ և կնիքներ պարունակող բոլոր էջերի պատճենները
- Վավեր ու անվավեր անձնագրերի բնօրինակներն ու պատճենները (վիզաներ և կնիքներ պարունակող բոլոր էջերի պատճեններով) **(միայն Իսպանիայի դեպքում)**
- Նախորդ 3 տարվա ընթացքում ստացված շենգենյան վիզաներ պարունակող էջերի պատճենները **(միայն Ավստրիայի դեպքում)**
- Այլ վավեր անձնագրեր՝ առկայության դեպքում **(միայն Լեհաստանի դեպքում)**
- 1 կամ 2 նոր կենսաչափական լուսանկարներ (3.5 × 4.5սմ, սպիտակ ֆոնով)

Ճամփորդություն և կացություն

- Վերադարձով ավիատոմսի ամրագրում
- Հունաստանը պահանջում է ամբողջ այցելության ժամանակացույցը
- Շենգենյան գոտում բնակվելու վայրի վերաբերյալ ապացույց (օրինակ՝ հյուրանոցի ամրագրում)
- Հունաստանը պահանջում է նաև հյուրանոցի համար վճարման ապացույցները
- Եթե ճամփորդության ընթացքում պատրաստվում եք այցելել շենգենյան գոտու մի քանի երկրներ, ապա բնակության վայրի վերաբերյալ ապացույցներն անհրաժեշտ են բոլոր երկրների համար
- Ճամփորդական բժշկական ապահովագրության վկայագիր շենգենյան բոլոր երկրների համար (նվազագույնը €30,000 ապահովագրական վճարի սահմանաչափով)

Ֆինանսական միջոցներ և աշխատանք

- Բանկային հաշվի քաղվածքի բնօրինակը (նախորդող 3–6 ամիսների համար)
- Գործատուի կողմից տրված տեղեկանք (առավելագույնը մեկ ամսվա վաղեմության), որտեղ նշվում են աշխատավարձի չափը և աշխատանքային պայմանագրի ժամկետը
- Գործատուի կողմից տրված՝ աշխատանքից բացակայելու թույլտվություն կամ արձակուրդը հաստատող տեղեկանք **(միայն Ավստրիայի դեպքում)**
- Աշխատանքային պայմանագիր **(միայն Ֆրանսիայի դեպքում)**
- Պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված՝ ֆիզիկական անձի անհատական հաշվի քաղվածք, որտեղ նշված է աշխատավարձի չափը **(Ավստրիայի և Գերմանիայի դեպքում)**
- Հովանավորված ճամփորդությունների դեպքում՝ հովանավորի կողմից տրված հիմնավորող նամակ և հարակից այլ փաստաթղթեր (հովանավորի բանկային հաշվի քաղվածքը և անձը հաստատող փաստաթուղթը)
- Ձեռներեցների դեպքում՝ իրավաբանական անձի գրանցման վկայականը և հարկային տեղեկանքը
- Ուսանողների դեպքում՝ ուսանողական քարտ, տեղեկանք ուսումնական հաստատությունից և խնամակալի կամ հովանավորի մոտ բավարար ֆինանսական միջոցների առկայության ապացույց
- Թոշակառուների դեպքում՝ թոշակի վերաբերյալ տեղեկանք կամ քաղվածքներ, ինչպես նաև սեփականության իրավունքի վկայական(ներ) (առկայության դեպքում)

Հայաստանի հետ կապերը

- Սեփականության իրավունքի վկայական(ներ) (Չեխիա, Իտալիա, Լիտվա, Լեհաստան, Հունաստան)
- Քաղաքացիական կարգավիճակի վերաբերյալ տեղեկություններ (ամուսնության վկայական, երեխաների ծննդյան վկայականներ, ընտանեկան այլ կապերը ապացուցող փաստաթղթեր)(Գերմանիա, Լիտվա, Իտալիա, Ֆրանսիա)

Անչափահասներ

- Ծննդյան վկայական և անձնագիր
- Ծնողների անձնագրերի պատճեններ
- Մեկ ծնողի ուղեկցությամբ կամ առանց ծնողների ճամփորդելու դեպքում՝ ծնող(ներ)ի համաձայնություն նոտարական վավերացմամբ (անգլերեն թարգմանությամբ)

Հայերեն լեզվով փաստաթղթերը պետք է ներկայացվեն անգլերեն (կամ համապատասխան երկրի պաշտոնական լեզվով) նոտարական թարգմանությամբ: Նոտարական թարգմանություն չի պահանջում միայն Գերմանիայի հյուպատոսությունը:

Դիմումը պատրաստելիս խորհուրդ է տրվում պարտադիր այցելել համապատասխան հյուպատոսության կայքը (տես ստորև) և տեղեկանալ այնտեղ հրապարակված անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին:

Ավստրիա՝
https://www.bmeia.gv.at/en/austrian-embassy-tbilisi/travels-to-austria/entry-and-residence/how-to-apply
https://www.vfsglobal.com/one-pager/austria/armenia/english/index.html

Բուլղարիա՝
https://www.mfa.bg/en/embassies/armenia

Չեխիա՝
https://mzv.gov.cz/yerevan/en/visa_and_consular_information/visa_information/index.html
https://visas-cz.tlscontact.com/en-us/country/am/vac/amEVN2cz

Գերմանիա՝
https://eriwan.diplo.de/am-de/service/visa/visainformation-englisch-2726414
https://visas-de.tlscontact.com/en-us

Հունաստան՝
https://www.mfa.gr/missionsabroad/en/armenia-en/visas
https://am-gr.gvcworld.eu/en

Ֆրանսիա՝
https://france-visas.gouv.fr/en/accueil
https://visas-fr.tlscontact.com/en-us/country/am/vac/amEVN2fr

Լիտվա՝
https://am.mfa.lt/en/travel-and-residence/general-information/visas/59
https://visa.vfsglobal.com/one-pager/Lithuania/armenia/english/

Լեհաստան՝
https://www.gov.pl/web/armenia-en/c-type-schengen-visa

Ռումինիա՝
https://erevan.mae.ro/en/romania/299

Սլովակիա՝
https://www.mzv.sk/web/jerevan-en/visa-and-services/schengen-visa
https://www.blsslovakiavisa.com/armenia/about.php

Իտալիա՝
https://ambjerevan.esteri.it/en/servizi-consolari-e-visti/servizi-per-il-cittadino-straniero/visti/
https://visas-it.tlscontact.com/en-us/country/am/vac/amEVN2it/visa-types

Իսպանիա՝
https://www.exteriores.gob.es/Consulados/moscu/ru/Paginas/index.aspx
https://armenia.blsspainvisa.com

ԻՆՉ Է ՊԵՏՔ ԱՆԵԼ ԵՎ ԻՆՉ ՊԵՏՔ ՉԷ ԱՆԵԼ

Եթե ցանկանում եք խուսափել մերժումներից, հետևեք այս խորհուրդներին

ԻՆՉ Է ՊԵՏՔ ԱՆԵԼ

Մտապահեք հիմնական պահանջները

- Ձեր կողմից նվշած ճամփորդության նպատակները պետք է լինեն արժանահավատ և հիմնավորված համապատասխան փաստաթղթերով)
- Ներկայացրեք բավարար ֆինանսական միջոցների ապացույցներ
- Հիմնավորեք Հայաստան վերադառնալու Ձեր մտադրությունը (օրինակ՝ ներկայացնելով փաստաթղթեր, որոնք ապացուցում են անձնական, մասնագիտական կամ տնտեսական ամուր կապերը հայրենիքի հետ)

Ներկայացրեք ամբողջական և արժանահավատ փաստաթղթեր

- Միշտ նախապես ծանոթացեք հյուպատոսությունների կողմից հրապարակվող տեղեկատվությանը
- Տեղեկացեք համապատասխան հյուպատոսությունների կայքերում հրապարակված փաստաթղթերի ցանկերին
- Ձեզ համար կազմեք անհրաժեշտ փաստաթղթերի ստուգման թերթիկ

Դրսևորեք վստահելիություն և հետևողականություն

- Ձեր կողմից ներկայացվող բոլոր փաստաթղթերն ու տեղեկությունները պետք է լինեն կապակցված, արժանահավատ և ստուգելի
- Ցույց տվեք կայուն ֆինանսական պատմություն և աշխատանք

Դիմեք ճիշտ հյուպատոսություն

- Դիմեք միմիայն հիմնական ուղղությունը հանդիսացող երկրի հյուպատոսություն

Ժամանակին պատրաստ եղեք

- Դիմումը ներկայացրեք հնարավորինս նախապես, սակայն ոչ ավելի վաղ, քան ճամփորդությունից վեց ամիս առաջ և ոչ ավելի ուշ, քան 15 օրացուցային օր մինչև մեկնելը
- Բավարար ժամանակ նախատեսեք պակասող փաստաթղթերը հավաքելու համար

Եղեք ազնիվ

- Ներկայացրեք միմիայն հավաստի փաստաթղթեր
- Ստուգեք բոլոր տեղեկությունների ճշգրտությունը

Մերժման դեպքում

- Ուշադիր ծանոթացեք մերժման որոշմանը և դրանում բերված հիմնավորումներին
- Փորձեք վերացնել մերժման որոշման մեջ նշված անճշտությունները մինչև որոշումը բողոքարկելը կամ կրկին դիմելը

Հիշեք

- ✓ Վիզայի մերժման որոշման բողոքարկման ժամկետները երկրից երկիր տարբեր են
- ✓ Բողոքարկումը շատ հաճախ անօգուտ է, եթե մերժման պատճառները վերացված չեն
- ✓ Երբեմն ավելի լավ է կրկին դիմել, քան բողոքարկել

ԻՆՉ ՊԵՏՔ ՉԷ ԱՆԵԼ

Մի ներկայացրեք կեղծ փաստաթղթեր և տեղեկություններ

- Կեղծված բանկային քաղվածքները, տեղեկանքները կամ հրավերները հանգեցնում են մերժման և նույնիսկ կարող են պատասխանատվություն առաջացնել
- Կեղծիք են համարվում նաև միտումնավոր փոփոխված բնօրինակները

Մի զբաղվեք «վիզա շոփինգով»

- Մի դիմեք հիմնական ուղղությունը չհանդիսացող երկրի հյուպատոսություն
- Ազնվորեն նշեք հիմնական ուղղությունը, մի փորձեք թաքցնել այն՝ կեղծելով հիմնավորող փաստաթղթերը: Մի ներկայացրեք ապակողմնորոշող փաստաթղթեր, որտեղ նշված է այցելության ավելի երկար տևողություն հիմնական ուղղությունը չհանդիսացող երկրում՝ ակնկալելով, որ այդ երկրի հյուպատոսությունը Ձեզ «հեշտ ու արագ» վիզա կտրամադրի

Խուսափեք կասկածահարույց տեղեկություններ տրամադրելուց և արկածախնդիր քայլերի դիմելուց, ինչպիսիք են, օրինակ՝

- Ճամփորդության անտրամաբանական ժամկետները կամ հստակ չձևակերպված նպատակը
- Հյուրանոցի անստուգելի ամրագրումները
- Դիմումը հանձնելուց հետո ամրագրման չեղարկումը
- Մի քանի տարբեր դիմողների համար միևնույն ամրագրումը ներկայացնելը
- Կացության ապացույց չունեցող անձանց կողմից տրված հրավերի նամակներ ներկայացնելը
- Ամրագրումների հետ կապված ցանկացած ոչ թափանցիկ կամ անազնիվ գործողությունները

Մի նենգափոխեք ֆինանսական կարգավիճակին վերաբերող տեղեկությունները

- Դիմելուց առաջ հատուկ այդ նպատակով ձեր բանկային հաշվին խոշոր մուտքագրումներ մի կատարեք
- Մի տրամադրեք կեղծ տվյալներ պարունակող տեղեկանքներ զբաղվածության և աշխատավարձի չափի վերաբերյալ

Մի նշեք անիրատեսական կամ անտրամաբանական երթուղիներ և ուղղություններ

- Ճամփորդության ծրագիրն ու ժամանակացույցը պետք է արտացոլեն Ձեր ֆինանսական հնարավորություններն ու համապատասխանեն հայտարարված նպատակին
- Ընդհանուր բովանդակությամբ՝ տիպային հրավերի նամակներն անշուշտ կասկածներ կառաջացնեն

Ներկայացրեք Հայաստանի հետ ամուր կապերը հիմնավորող հստակ տեղեկություններ

- Կայուն աշխատանքը, եկամուտը և ամուր սոցիալական կապերը ավելորդ կասկածներ չեն հարուցի

Չափից ավելի հույս մի դրեք միջնորդների վրա

- Ոչ ոք չի կարող երաշխավորել Ձեր վիզա ստանալը
- Մի վճարեք միջնորդներին այն ծառայությունների դիմաց, որոնք անվճար հասանելի են հյուպատոսություններում կամ վիզաների կենտրոններում
- Մի ընդունեք կեղծ փաստաթղթեր որևէ մեկից

Կրկին մի դիմեք առանց անճշտությունները վերացնելու

- Նույն դիմումը կրկին ներկայացնելը մեծ հավանականությամբ կհանգեցնի նոր մերժման

Մի թյուրընկալեք վիզայով տրված հնարավորությունները

- Շենգենյան վիզան աշխատանքի և երկարաժամկետ կացության իրավունք չի շնորհում
- Հիշեք նաև, որ ԵՄ-ում ապաստան հայցելու դեպքում այն ստանալու հավանականությունը չնչին է: 2024թ.-ին Հայաստանի քաղաքացիների կողմից ներկայացված ապաստանի հայցերի մոտ 97%-ը մերժվել է

Վիզայի մերժման շատ հաճախ հանդիպող պատճառներից մեկը միջնորդ կազմակերպությանը չափից շատ վստահելն է: Հիշեք. ոչ միջնորդները, ոչ էլ վիզաների կենտրոնները ի զորու չեն ազդել հյուպատոսության՝ վիզա տրամադրելու կամ մերժելու որոշման վրա:

ԱՄՓՈՓԻՉ ԽՈՐՀՈՒՐԴ

Ձեր դիմումն առաջին հերթին գնահատվում է ըստ դրա արժանահավատության: Այն պետք է լինի ամբողջական, հավաստի և հիմնավորված:

Իմաստը ոչ թե փաստաթղթերի քանակի, այլ դրանց հավաստիության ու արժանահավատության մեջ է:

Ներկայացված փաստաթղթերից և տեղեկություններից պետք է հստակ երևա, թե ով եք Դուք, ինչ նպատակով եք ճամփորդում, ինչպես եք վճարելու ճամփորդության համար և ինչ պատճառներ ունեք Հայաստան վերադառնալու: